

ՆԱԽԱՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ
V—VI ԴԴ. ԳՐԱԲԱՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ

Հայ բերականության պատմության մեջ նախամասնիկներին առաջինը անդրադարձել են Դիոնիսիոս Թրակացու «Արվեստ բերականության» գրքի հայ թարգմանիչն ու մեկնիչները¹։ Սակայն նրանք նախամասնիկները քննել են նախադրություն խոսքի մասի համակարգում։ Հունարենի 18 նախադրության դիմաց Թրակացու բերականության հայ թարգմանիչը հին հայերենի համար ընդունել է 50 նախադրություն և 3 հտադրություն։ Թարգմանչի ընդունած նախադրություններն են՝ ներ, արտ, ատր, ապ, բաց, նը, ին/ըն, բար, բադ, շաղ, շար, մուշտ, զով, ջոկ, պատ, նախ, կանովս, վաղ, առ, արդ, վեր, ըստ, ընդ, ենթ, ստոր, խում, ունջ, գկնի, յետ, տար, մատ, յար, բող, գաւ, թափ, պար, կար, վար, բակ, թեռ, ճիռ, հակ, դեր, փոխ, մակ, քան, գեր, աւել, վասն, յաղագս։ Դասակարգելիս թարգմանիչը, քանի որ հիմք է ընդունել շարադասությունը, առանձնացրել է միայն հտադրությունները։ «Եւ ստորադասք են ի սոցանէ երեք. սակս, կից, որդա»²։ Այս ցանկում մենք հանդիպում ենք նախածանցի, վերջածանցի, նախադրության, հտադրության, մակբայի, ածականի և այլն։ Դրանցից մի քանիսը (առ, ընդ, ըստ) նախդիր են, մի մասը՝ բաց («հունաբան հայերենում» սրան ավելի շատ հանդիպում ենք ածանցական գործառնություն), գեր, գկնի, յետ, քան, վասն, յաղագս, սակս, կից նախադրություններ են, որոշ մասն էլ մակբայներ են, ինչպես՝ նախ, կանովս, վաղ, արդ, վեր և այլն։ Դրանց շարքում կան և այնպիսիները, որոնք արհեստականորեն ստեղծված մասնիկներ են և ածանցական ոչ մի դեր էլ չեն խաղացել, ինչպես, օրինակ, արտ, մուշտ, թեռ, գաւ, ճիռ, խում, ունջ։

¹ Հայագիտության մեջ Թրակացու բերականության թարգմանության ժամանակի և թարգմանչի վերաբերյալ միասնական տեսակետ գոյություն չունի։ Որոշ հայագետներ թարգմանություն ժամանակը համարում են V դ. երրորդ քառորդը (տե՛ս Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, Երևան, 1944, էջ 101—102, Գ. Զահուկյան, Թրակականական և ուղղադարական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 51), Հ. Մանանդյանը՝ VI դ. առաջին կեսը (Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա դարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 106)։ Իսկ Ն. Ակինյանն էլ՝ VI դ. վերջը կամ VII դ. սկիզբը (Ն. Ակինյան, Դասական հայերենը և վիեննական Մխիթարյան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 86—87)։ Հայագետների կարծիքը բաժանվում է նաև Թրակացու բերականության թարգմանչի հարցում։ Հայ մատենագրության մեջ գաբեր շարունակ թարգմանիչը և մեկնիչը տարբեր անձնավորություն են համարվել։ Առաջին անգամ Գ. Զահուկյանը իր վերոհիշյալ աշխատությունում (էջ 53—54) ապացուցում է, որ Թրակացու բերականության թարգմանիչը և մեկնիչը Դավիթ փիլիսոփան նույն անձնավորությունն է՝ Դավիթ Անհաղթը։ Վերջերս քանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մուրադյանը իր «Դիոնիսիոս Թրակացու բերականության թարգմանչի և մեկնիչի հարցը» հոդվածում («Պատմա-քանասիրական հանդես», 1980, № 3, էջ 68—87), Դավիթ Անհաղթին վերագրվող և նրան պատկանող երկրորդ լեզուն համարելով, հանգում է այն եզրակացության, որ Թրակացու բերականությունը թարգմանել է Դավիթ Անհաղթը, V դ. կեսերին, հունարան դպրոցի սկզբնավորման շրջանում։

² Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. 30.

Հունարան հեղինակների գործերում որպես նախածանց, ինչպես նկատել է Գ. Զահուկյանը³, գործածվել են նաև հոսմ- և համ- ածանցները, որոնք, սակայն, թարգմանիչը չի զետեղել փր ցանկում:

Հայտնի է, որ գրաբարը շրջաբաժանված է դասական և ետդասական փուլերի: Դասական փուլը ընդգրկում է 406—461 թթ.: Ստորև կանդաղառնանք նախամասնիկների գործածությունը V—VI դդ. գրաբար մատենագրության մեջ: Ետդասական շրջանի որոշ մատենագիրների՝ Դադար Փարպեցու, Ծղիշեի, Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, Ջենոնի երկերի լեզվի համեմատությունը Կորյունի, Եզնիկ Կողբացու, Աղաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի երկերի ու Աստվածաշնչի լեզվի հետ կայարյի, թե որ հեղինակից ինչ նախամասնիկներով բառեր են մտել հայերենի բառապաշարը: Նախ վերցնենք դասական շրջանի թվարկած հինգ երկերը՝ Ամենից առաջ նշենք, որ շուրջ երկուսուկես տասնյակ նախամասնիկներ՝ ալպ-, առ-, առա-, բաց-, գեր-, ընդ-, ըստ-, թեր-, թափ-, հախ-, համ-, հոսմ-, մատ-, յար-, յետ-, նախ-, շաղ-, շար-, սլար-, վաղ-, վեր-, տար-, փոխ-, փաղ-, դործածվել են և՛ դասական, և՛ ետդասական շրջանի մատենագրությունում: Սրանցից ավելի հաճախ հանդիպում ենք առ-ով կազմված բառերի, ինչպես՝ առընթերակայ (Կոր., էջ 76, Եզն., էջ 110), առլնուլ (Եզն., էջ 193, Աղաթ., էջ 8, 263), առընթեր (Աղաթ., էջ 247) և այլն⁴:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դասական շրջանում առ-ով կազմված բառերի թիվը մեծ է Աստվածաշնչում⁵, ինչպես՝ առեղծանել (Հ. 1, էջ 501—502), առնկալնուլ (Հ. 4, էջ 119), առմամանակ (ն. տ., էջ 30, 77, 123, 135), առխեթի (ն. տ., էջ 297), առտնին (ն. տ., էջ 255, 295, 399, 431, 490, 548), առօրեայ (Հ. 3, էջ 277) և այլն:

Ընդ-ը, որ դասական շրջանում գործածվել է հիմնականում որպես նախդիր, ունեցել է նաև ածանցական կիրառություն: Օրինակ՝ ընդդիմակաց (Կոր., էջ 24, Եզն., էջ 6, 22, 33, 167, 278), ընդունայնախօս (Կոր., էջ 86), ընդգրկել (Աղաթ., էջ 317, Աստ., Հ. 3, էջ 183), ընդխառնել (Աղաթ., էջ 5) և այլն:

Ընդ-ով կազմությունները ևս ավելի շատ են Աստվածաշնչում, ինչպես՝ ընդելուզանել (Հ. 1, էջ 161, Հ. 2, էջ 638, Հ. 3, էջ 179), ընդարոյս (Հ. 3, էջ 252, Հ. 4, էջ 321), ընդելանել⁷ (Հ. 4, էջ 265), ընդերկարութիւն (Հ. 3, էջ 144), ընդհարկանել (ն. տ., էջ 188), ընդմիջել (Հ. 1, էջ 176, Հ. 3, էջ 264, 765), ընդմտանել (Հ. 4, էջ 466), ընդունայն (Հ. 1, էջ 249, 408, Հ. 2, էջ 500), ընդարձակ, ընդարձակագոյն, ընդարձակել, ընդարձակեցուցանել, ընդարձակութիւն և այլն⁸:

Ըստ. սա որպես նախածանց դասական գրաբարում (և ոչ միայն այնտեղ) ունի շատ սահմանափակ կիրառություն. Կորյունի երկում դրան բոլորովին չենք հանդիպում, Եզնիկի, Բուզանդի երկերում՝ մեկական, Աղաթանգեղոսի Պատմությունում՝ երկու անգամ, ինչպես՝ «Եմի ոչ զբարւոյ զդէմս զգեցեալ

3 Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 75:

4 Թրակացու բերականության թարգմանությունում բերված ցանկում բերել:

5 Կորիւն, Վարդ Մաշտոցի, Երևան, 1941, Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, Աղաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1909 (օգտագործել ենք նաև հիշյալ երկերի համադրարանները):

6 «Աստուածաշունչ մատեն Հին եւ Նոր Կտակարանաց. բաժանեալ ի շորս հատորս», Վենետիկ, 1805:

7 Դադար Փարպեցի գործածել է նաև ընդելնուլ ձևը. տե՛ս «Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան», Տիֆլիս, 1904, էջ 43, 108:

8 Ընդ-ի ընթ տարբերակը՝ «տակ» իմաստով, որը համազոր է ենթ նախածանցին, դասական շրջանում գործածել է Բուզանդը. «Ընթաղցեալ առ ոտն հարին զմեծ քահանայութեան զաստուծոյ պատիւն» (էջ 3, 37): Հետագայում դրան հանդիպում ենք Մ. Խորենացու Պատմությունում. «Սպանին զերանելին, ընթաղցեալ ձիովք» («Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», Տիֆլիս, 1913, էջ 259):

մեղմեղիցէ, չկարէ ըստերիւրել յիրաւանց զիրաւագէտն» (Եզն., էջ 62): «Ապա Կոմս եղբայր իւր ըստանձնեալ առեալ բառնայր» (Բուզ., էջ 202)⁹: Այս վերջին ձևն է գործածել նաև Աղաթանգեղոսը (էջ 39, 398):

Վաղ. Ագաթանգեղոսի Պատմությունում և Աստվածաշնչում հանդիպում ենք վաղ- մասնիկով հետևյալ բաղադրություններին՝ վաղաւեր (Ագաթ., էջ 295), վաղափալ (ն. տ., էջ 294), վաղահասունկ (Աստ., հ. 3, էջ 366, 443), վաղամեռիկ (ն. տ., էջ 256), վաղայարոյց լինել (ն. տ., հ. 2, էջ 65, 210) և այլն:

Հակ- նախածանցով կազմված հնագույն բառերից են հակառակ (որին հանդիպում ենք բոլոր երկերում) և գրանից՝ հակառակորդ, հակառակել, հակառակութիւն ձևերը:

Նախ. բոլոր երկերում հանգես է գալիս որպես մակբայ, նախադրության բազմաթիւ (նախ քան) և նախածանց, Բերենք օրինակներ նախածանցի վերաբերյալ. նախարանել (Կոր., էջ 24), նախարոյս (Բուզ., էջ 148), նախագիտիլի (ն. տ., էջ 1), նախարարառ (Եզն., էջ 9), նախակարգ (Կոր., էջ 36, Ագաթ., էջ 187), նախընկալ (Կոր., էջ 50), նախադրուհ (Աստ., հ. 3, էջ 714), նախաթոռ (ն. տ., հ. 4, էջ 51, 99, 169), նախծին (ն. տ., հ. 1, էջ 132), նախամեծար (ն. տ., հ. 3, էջ 244), նախընծայացեալ (Եզն., էջ 94), նախաստեղծ (ն. տ., էջ 47, Ագաթ., էջ 144, 168, Աստ., հ. 3, էջ 244), նախածանօր (Ագաթ., էջ 362, Բուզ., էջ 32), նախավատակ (Բուզ., էջ 32), նախավկայ (ն. տ., էջ 32, 66), նախեկեղեցի (ն. տ., էջ 32) և այլն:

Վեր. սա հունաբան հեղինակների լեզվաոճը բնորոշող նախածանցներից է: Սակերիս դրանով կազմված բառերի հանդիպում ենք նաև դասական շրջանի մատենագրությունում, այսպես՝ վերակացու (Կոր., էջ 70, 72, 96, Ագաթ., էջ 375, 437, 441, 442, Բուզ., էջ 31, Աստ., հ. 1, էջ 28, 87, 117, 324), վերամբարձ (Ագաթ., էջ 98, Բուզ., էջ 71), վերմբարձ (Բուզ., էջ 172), վերընկալ (Ագաթ., էջ 242) և այլն: Աստվածաշնչում կան հունաբան դպրոցի լեզվաոճին ավելի հարիր օրինակներ. վերադիր (հ. 1, էջ 208), վերամարտիկ (հ. 3, էջ 260), ի վեր բերիլ (հ. 2, էջ 612) և այլն:

Աստվածաշնչում քեր- նախամասնիկով բազմաթիվ կազմությունների ենք հանդիպում, որոնք չկան Եզնիկի, Կորյունի, Ագաթանգեղոսի և Բուզանդի երկերում: Այսպես՝ քերակատար (հ. 3, էջ 239), քերահաւատ (ն. տ., էջ 3, 67, 252, հ. 4, էջ 16, 34, 37, 87, 149), քերահաւատութիւն (հ. 4, էջ 39), քերահամել (հ. 2, էջ 114):

Ետդասական գրաբարում գնայով ավելանում է հիշյալ նախամասնիկներով կազմված բառերի քանակը: Այդ նախամասնիկներին ավելի շատ հանդիպում ենք Մ. Խորենացու Պատմությունում, իսկ Դավիթ Անհաղթի երկերում այնքան շատ է նման մասնիկներով կազմված բառերի գործածության հաճախականությունը, որ Անհաղթի լեզուն բոլորովին տարբեր է մյուս մատենագիրների լեզվից:

Նդիշեի և Փարպեցու երկերում քննարկվող նախամասնիկներով կազմված բառերի քանակը բիւ է: Հր. Աճառյանի հաշվումներով Նդիշեի երկում պետք է լինի 5 բառ՝ բացառել, յարակայութիւն, վերաբերիլ, տարաբաժին, տարաբերիլ¹⁰: Մինչդեռ Նդիշեի երկում¹¹, բացի նշվածներից, կան նաև բազմաթիվ այլ բառեր՝ կազմված հիշյալ նախամասնիկներով, ինչպես՝ բացահայեաց (էջ 112), գերարտուր (էջ 59), թափանցանց (էջ 34, 110), քերահաւատել (էջ 42, 48), քերահաւատութիւն (էջ 24, 99, 104), համագործ (էջ 78), համագունդ (էջ 16, 43, 71, 74, 80, 96, 100), համահայր (էջ 170), յարածուսի

⁹ Փ ա տ տ ո ս Բ ու զ ա ն դ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883 (օգտագործել ենք նաև տվյալ երկի համադրարտը):

¹⁰ Հ. ր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 155:

¹¹ Նդիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957 (տե՛ս նաև տվյալ ծրվի համադրարտը):

(էջ 167), պարագլուխ (էջ 96), տարածամ (էջ 111), տարածամել (էջ 118), տարակոյս (էջ 59, 111), տարակոսան (էջ 82, 117), տարապարտուց (էջ 81, 185), փոխադրել (էջ 192) և այլն:

Հր. Աճառյանը Դ. Փարպեցու Պատմությունում հունարան նախամասնիկներով կազմություններ է համարում յեղափոխություն¹², շարագիր և շարագրել բառերը¹³, Բայց պարզվում է, որ Փարպեցու երկում, բացի դրանցից, կան երկու տասնյակից ավելի այլ բաղադրություններ՝ ստեղծված նույն մասնիկներով, ինչպես՝ ապշություն (էջ 40, 97, 102, 106, 154), առաքուր (էջ 150), բացարձակ (էջ 179), բացօթեազ (էջ 9), ընդելուզանել (էջ 10, 29, 30, 32), ընդվայրաբանություն (էջ 117), թերակատար (էջ 40, 50), թերահաւատ (էջ 44), թերահաւատություն (էջ 147, 151), համածին (էջ 10), նախագիտ (էջ 41), նախադնել (էջ 143), նախասպան (էջ 111), նախաստեղծ (էջ 39), շաղփաղփություն (էջ 5), վերաբերել (էջ 10, 200), տարակոյս (էջ 87), տարակոսան (էջ 2), տարակուսել (էջ 12, 16, 50, 118, 154, 171) և այլն:

Արդեն նշվեց, որ վերոհիշյալ նախամասնիկներով բառեր ավելի շատ գործածել է Մ. Խորենացին, ինչպես՝ աղբերխտ (էջ 351), ապուշ (էջ 290), առընդունել (էջ 355), աղնուլ (էջ 344), արտադատություն (էջ 206), արտահալածել (էջ 72), արտանառել (էջ 351), արտասանմանել (էջ 240, 293), արտափայլել (էջ 357), գերապայծառ (էջ 238), համաբարոյ (էջ 364), համաբնակ (էջ 299), համագգի (էջ 145, 352), համագն (էջ 352), համաթի (էջ 225), համախորհուրդ (էջ 347), համակամ (էջ 273), համամայր (էջ 236), համախիտ (էջ 364), համանմանակ (էջ 352), համանուն (էջ 182, 324), համապատի (էջ 348), համատոհմ (էջ 202), հոմանուն (էջ 199), հոմիշխան (էջ 253, 256), յարանետեսել (էջ 343), նախամարգարէ (էջ 304), նախատեսություն (էջ 74, 238), պարածածկել (էջ 72, 267), պարականոն (էջ 259), վերաբանություն (էջ 343), վերագրել (էջ 54, 323), վերադէտ (էջ 322), վերածնություն (էջ 342) և այլն:

Եթե մյուս երկերում (Աստվածաշունչ, Փարպեցի) հանդիպում ենք շարահանածանցով կազմված մեկ-երկու օրինակի, ապա Մ. Խորենացու Պատմությունում դրանով կազմված բառերի թիվը մեծանում է, ինչպես՝ շարագիր (էջ 326), շարագրել (էջ 22, 90, 246), շարագրություն (էջ 257), շարագրսել (էջ 31), շարագրություն (էջ 88), շարայարել (էջ 213) և այլն:

Մեր պատմահայրը առաջին անգամ գործածել է բաղ-, մակ-, ստոր- նախածանցներով բառեր, ինչպես՝ բաղբաղել (էջ 91), բաղադրել (էջ 124), մակագրություն (էջ 343), ստորագիր (էջ 238), ստորագրություն (էջ 4, 90):

Պատկերը միանգամայն փոխվում է, երբ ծանոթանում ենք հունարան դպրոցի ներկայացուցիչների երկերի լեզվին: Ինչպես իրավացիորեն նշում է Հր. Աճառյանը, Դավիթ Անհաղթի, Զենոնի և մյուսների լեզուն այնքան է հագեցած հունաբանությամբ, որ կարծես թե առանձին լեզու լինի¹⁴: Նրանց երկերում, վերոհիշյալ ածանցավոր բառերից բացի, հանդիպում ենք նաև նոր բաղադրությունների: Նախ վերցնենք Դավիթ Անհաղթի փիլիսոփայական երկերը: Հայտնի է, որ նա ունի փիլիսոփայական չորս գործ՝ «Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն «նեբրածութեան» Պորփիրի», «Մեկնութիւն «Ստորագրութեան» Արիստոտէլի» և «Մեկնութիւն ի «Վերլուծական» Արիստոտէլի»¹⁵: Դրանցում գործածված նորակերտ բառերն ու գիտական տերմինները կազմվել են ապա-, առ-, արտ-, բաղ-, գեր-, ենթ-, համ-, մակ-, յար-, ներ-, շաղ-, շար-, պար-, ստոր-, վեր-, տար-, տրամ-, փաղ- նախածանցներով, ինչպես՝ ապացոյց (էջ 269, 303, 313), ապացուցություն (էջ 114,

12 Դ. Թրակացու բերականության հայերեն թարգմանությունում յեղ—նախամասնիկը փոխառված:

13 Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 155:

14 Նույն տեղում, էջ 156:

15 Դավիթ Անհաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, Երևան, 1980:

118), առադրել (էջ 319), արտատալ (էջ 218), բաղակարգութիւն (էջ 228), բացբարձական (էջ 198), բացագործել (էջ 107), բացառութիւն (էջ 320), գե-
րադրական (էջ 263), գերադրութիւն (էջ 320), ենթակայ (էջ 114, 149, 151),
ենթագրել (էջ 139), ենթագրութիւն (էջ 140, 152, 153, 172), ենթառնել
(էջ 125), ենթալուսնեայ (էջ 119), համալսարան (էջ 34, 86), մակբայ (էջ 294,
298), մակագրել (էջ 107—109, 116...), մակածութիւն (էջ 325), մակամտա-
ծութիւն (էջ 197), յարադրել (էջ 110, 180, 184...), յարանուն (էջ 234), յա-
րացոյց (էջ 113, 140, 240, 256), ներանձնական (էջ 113), ներամտածել
(էջ 209, 210), ներգործել (էջ 156), ներգործութիւն (էջ 197, 201), ներգրաւոր
(էջ 216), ներգեղում (էջ 247), ներկարծելի (էջ 318), շաղկապ (էջ 118, 121,
319), շարաբանութիւն (էջ 151, 207), շարաբեքել (էջ 146, 147, 189), շարա-
կարգութիւն (էջ 206), շարամբծիլ (էջ 285, 293...), շարամանութիւն (էջ 225),
պարտոել (էջ 264), պարփակել (էջ 196, 217), ստորագրութիւն (էջ 107—112...),
վերլուծութիւն (էջ 107, 113—115...), տարբերութիւն (էջ 109, 112...), տարա-
լուծական (էջ 183), տարուող (էջ 289, 291), տրամաբանական (էջ 32, 112,
113...), տրամաբանել (էջ 113), տրամաբանութիւն (էջ 149), տրամագծութիւն
(էջ 163), տրամադրել (էջ 93), տրամախոսութիւն (էջ 123, 304, 322), տրա-
մանառնել (էջ 334), տրամանկիւնի (էջ 163), տրամաշափ (էջ 299...), տրա-
մուրդել (էջ 246, 287, 289, 291), փաղանուն (էջ 139, 147), փաղառութիւն
(էջ 225, 235, 286)¹⁶ և այլն:

Բրակացու բերականութեան թարգմանչի և մեկնիչների կողմից նա-
խադրութեանը տրված սահմանման համաձայն՝ նույն մասնիկը կարող է հան-
գես գալ և՛ որպէս նախադրություն, և՛ որպէս նախածանց¹⁷: Բերականական
այս իրաչութեան լավագույն ապացույցն է ներ մասնիկի գործածությունը հու-
նաբան մատենագրությունում: Հունարան հեղինակները ներ-ը որպէս նա-
խադրություն գործածելիս կազմում են և՛ կցական, և՛ հարադրական բարդու-
թիւն: Վերևում բերվեցին օրինակներ ներ-ի ածանցական կիրառութեան վե-
րաբերյալ: Այժմ անդրադառնանք հրա կիրառութեանը որպէս նախադրութեան:
Հստ որում, ներ նախադրութեան հետ միասին, նախադաս կամ ետադաս շա-
րադասութեամբ, գործածվում է նաև ի նախդիր: Օրինակներ՝ Դավիթ Ան-
հաղթի երկերից. «Իսկ տեսակագոյնքն ներ թուումն իմն են՝ այլ ոչ լանհնին»
(էջ 150): «Յորժամ ասէ, եթէ մարդ կենդանի, այս ի ներ բոլորումն ասի»
(էջ 315): «Եւ նոցին հակակայքն՝ ոչ ներ ի բոլորումն և ոչ ըստ ումեքում»
(ն. տ.):

Հայ մեծ փիլիսոփան նույն իմաստով («մեջ», «ներսում») գործածում է
նաև և մասնիկը, նրան զուգադրելով ի նախդիր: Օրինակ՝ ներթակայում
(էջ 242—245, 249, 250, 257...), ներթակայողքն (էջ 266...): «Ոչ է պարտ
զուրացականն ի հակադարձութիւն առմերծիլ ի ներթակայումն և ընդհանուր
կիտացն պատճառելով» (էջ 336):

Դավիթ Անհաղթը ստեղծում է այնպիսի գիտական տերմիններ, որոնցում
հանդես են գալիս կրկնակի ածանցներ կամ ածանցն ընկնում է բառի ներսը.
օրինակներ. առաւտագործել (էջ 175), բաղնակադասուն (էջ 275), ներստո-
րադական (էջ 77), ներտրամադական (էջ 41), այլաստորակայք (էջ 153),
միափաղառական (էջ 186), բառափաղառական (էջ 187) և այլն:

Ձեռնի երկի հայերեն թարգմանությունում¹⁸ (այն թարգմանվել է VI դ.)
կան բազմաթիվ նոր բառեր ու գիտական տերմիններ՝ կազմված վերոհիշյալ

¹⁶ Ավելի հաճախ գործածվող բառերի բոլոր կիրառությունները լենք թվարկել: Օրինակի
համար նշենք, որ Դավիթ Անհաղթի փիլիսոփայական երկերի 109-րդ էջում միայն շառ- նա-
խածանցով կազմված բառերի 12 կիրառություն կա:

¹⁷ Н. Адонц, նշվ. աշխ., էջ 30:

¹⁸ Օգտագործել ենք Մ. Մաշտոցի անվան մատենադարանի «Գիտական նյութերի ժողո-
վածություն» (1950 թ., № 2) և. Խաչիկյանի հրատարակած տեքստը և տվյալ երկի համարա-
բարը:

նախամասնիկներով, ինչպես՝ արտաբերել (էջ 84, 86), արտաբերություն (էջ 84), արտադատություն (էջ 81, 84), արտառություն (էջ 84), բացերեւութիւն (էջ 82), գերակատարել (էջ 94), դերանուն¹⁹ (էջ 88), ընդկայություն (էջ 92), հակադարձ (էջ 92), մակադրություն (էջ 87, 92, 93), մակագդ (էջ 88), մակացություն (էջ 89, 90, 92), յարակցել (էջ 91), յարաձգական (էջ 95), ներգոյ (էջ 88), ներառնետ (էջ 94), շարաբառություն (էջ 90), շարասություն (ն. տ.), շարառություն (էջ 84), ստորադաս (էջ 87), ստորադասություն (էջ 90), ստորասություն (ն. տ.), վերագնալ (էջ 81), վերադասական (էջ 86), վերածնություն (էջ 88), վերատեսություն (էջ 94), տրամագիծ (էջ 81), տրամադրություն (էջ 92, 94) և այլն:

Ասվեց, որ Թրակացու քերականության թարգմանիչը նախադրություն խոսքի մասի մեջ է մտնում՝ նաև սակս, կից և ուղ ձևույթները: Դրանցից իրականում նախադրություն է միայն սակս բառը, որն ունի նախադաս և հետդաս գործածություն: Կից-ը ածական է, որը գրաբարում գործածվել է նաև որպես նախադրություն: Ուղ-ը վերջածանց է, որին չենք հանդիպում միայն Զենոնի հիշյալ երկում, իսկ մյուս մատենագիրները գործածել են առաջնորդ, անլորդ, կցորդ, հակառակորդ, փոխանորդ, հաղորդ, նախանձորդ, նախատորդ, լուլորդ, ուղորդ և այլ բառերի կազմում: Անհաղթի երկերում այդ ածանցին հանդիպում ենք նաև բարդ բառերի կազմում, ինչպես՝ առաջնորդապետ (էջ 122), ուղորդագնաց (էջ 140) և այլն:

Իրոք ընդհանուր երրակացություն կարող ենք ասել հետևյալը. Դիոնիսիոս Թրակացու «Արվեստ քերականության» գրքի հայերեն թարգմանությունում բերվող նախամասնիկների շուրջ կեսը գործել է և՛ դասական, և՛ հետդասական գրաբարում: Հետևաբար, որոշակի սահմանագիծ անցկացնել նախամասնիկների գործածության միջև դասական և հետդասական փուլերի գրաբար մատենագրությունում, անհնար է²⁰:

Դասական շրջանի մատենագրությունում չեն գործածվել միայն բաղ-ը, դեր-, մալ-, ներ-, ստոր-, տրամ- նախածանցները: Ընդ որում, դրանցով կազմված բառեր չենք գտնում նաև հետդասական շրջանի մատենագիրներ Եղիշի և Ղազար Փարպեցու երկերում: Այդ ածանցները գործածել է Մովսես Խորենացին, բայց դրանցով կազմված բառերի հաճախականությունը շատ ավելի մեծ է Դավիթ Անհաղթի և Զենոնի երկերում (Զենոնի՝ վերոհիշյալ փոքրիկ երկում գտնում ենք քսանից ավելի, իսկ Դավիթ Անհաղթի փոքրիկ փոխադասական երկերում՝ շուրջ հարյուր բառեր ու գիտական տերմիններ):

Թրակացու քերականության հայերեն թարգմանությունում թվարկված նախամասնիկների գրեթե կեսը բառակազմական ակտիվ դեր է խաղացել հայոց լեզվի բոլոր փուլերում: Հայոց լեզուն հարստացել է մոտ երկուսուկես տասնյակ նախածանցներով: Կապված գիտատեխնիկական հեղափոխության հետ՝ հիշյալ ածանցներով բազմաթիվ նոր բառեր ու տերմիններ են ստեղծվել ու ստեղծվում են և արդի հայերենում:

19 Իհարկե, այստեղ նկատի չունենք Դ. Թրակացու «Արվեստ քերականության» գրքի հայերեն թարգմանությունը, որտեղ այդ բառը կա:

20 Վ. Առաքելյանը իր «Դասական և հետդասական գրաբարը» հոդվածում («Պատմաբանասիրական հանդես», 1976, № 1, էջ 255—272), առարկելով Վինենայի Մխիթարյանների և Հր. Աճառյանի գրաբարի՝ շրջաբառաման համար ընդունած 18 առանձնահատկությունների դեմ (դրանցից մեկն էլ նախամասնիկավոր բառերի գործածությունն է), փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է տալիս, որ գրաբարի նման դասակարգումը ճիշտ չէ, որովհետև V դ. մատենագիրների (բացառյալ հունարան հեղինակները) լեզուն հիմնականում նման է իրար:

УПОТРЕБЛЕНИЕ ПРЕФИКСОВ В ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ V—VI вв.

ГЕВОРГ ТОСУНЯН

Резюме

Переводчик книги «Искусство грамматики» Дионисия Фракийского взамен 18 греческих префиксов в грабаре принимает 50 префиксов и 3 постфикса. Более половины частиц употреблялось в классической и постклассической древнеармянской литературе, поэтому невозможно провести четкую границу в сфере употребления этих морфем.

Около трех десятков префиксов сыграли большую деривационную роль на всех этапах развития армянского языка. С помощью этих частиц было образовано много слов и научных терминов, часть префиксов и ныне принимает активное участие в процессе словообразования армянского языка.